10057098

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 12

14.10.13 №4/9.4/15375-13

Ձեր №

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ջավադյան,

Ուսումնասիրելով Ձեր՝ 2013 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 15.1-07/000910-13 գրությամբ ներկայացված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր)՝ հայտնում ենք հետևյալը.

1. Նախագծերի վերաբերյալ բովանդակային առումով առաջարկություններ և դիտողություններ չունենք:

2. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով կատարվող լրացման 912.1 հոդվածի 7-րդ մասում անհրաժեշտ է «հոդված 5-րդ» բառերը փոխարինել «հոդված 6-րդ» բառերով:

3. Միաժամանակ հայտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի համարակալումն անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես՝ 1-ին հոդվածով կատարվող լրացման մեջ անհրաժեշտ է «912.6» թիվը

փոխարինել «912.1» թվով, որից հետո համապատասխան համարակալմամբ շարադրել մյուս հոդվածները: Այս կապակցությամբ հայտնում ենք նաև, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ներկայացված նախագիծը բաղկացած է 2 հոդվածից, ուստի անհրաժեշտ է վերջին՝ 2-րդ հոդվածի համարակալումը ճշտել՝ «հոդված 5» բառերի փոխարեն նշելով «հոդված 2» բառերը:

4. Կից տրամադրում ենք նաև բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

Հարգանքով՝

ՊԱՎԵԼ ՍԱՖԱՐՅԱՆ

Կատարող՝ Ժենյա Հրաչյան
Իրավաբանական վարչության փորձագետ
Հեռ. 102

Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի թե ընդունումը, թե չընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեների եկամուտների, ծախսերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխման չի հանգեցնում: